ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ. Թ. Ա. VII—VI ԴԴ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի մ. թ. ա. VII—VI դդ. պատմությունը սերտորեն կապված է Ասորեստանի ու Ուրարտուի կործանման և Բաբելոնի ու հզորացող Մեդական թագավորության պատմության հետ։ Այս ժամանակաշրջանում կազմավորվեց հնագույն հայկական թագավորությունը[1]։

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Թիգլաթպալասար Գ-ի (մ. թ. ա. 743 և 735 թթ.) և Սարգոն Բ-ի (մ. թ. ա. 714 թ.) արշավանքներից հետո Արմե-Շուպրիան և մի շարք այլ երկրներ անջատվեցին Ուրարտուից[2]։ *Նշված ժամանակաշրջանում առաջատար դերը պատկանում էր Արմե-Շուպրիային (վերջինս ասուրական աղբյուրներից հայտնի՝ Շուբարտու անվան ձևափոխությունն է)։ Շուբարտու երկրի տարածքի մասին Թուկուլթի-Նինուրթա Ա-ի (մ. թ. ա. 1243—1221) արձանագրություններում նշված է. «Այն ժամանակ Բաբխի, Կաղմուխի, Պուշշի, Մումմի, Ալզի, Մագանի, Նիխանի, Ալայա, Տեգիմզի (կամ Տեբուրզի), Պուրուլումզի երկրները՝ շուբարեացիների ողջ ընդարձակ երկիրը, ես այրեցի կրակի մեջ»*[3]։ *Ն. Ադոնցը Արմե երկիրը թվարկում էր այն երկրների շարքում, որոնց տեղը հայտնի չէր*[4]։ *Դրանով էր պայմանավորված նրա նշումը. «Ուլլուբան կամ Խուլփի կաղան Շուպրիայի մասը չէր կազմում. նա մնում էր Ուսուսուանի (Սասուն կամ Սասունի կաղան) հետ միասին Ուրարտուի իշխանության տակ...»*[5]։ *Ս. Երեմյանը Արմե-Շուպրիայի տեղադրության մասին հանգել է հետևյալ եզրակացությանը. «Դեռևս հին բաբելոնական դարաշրջանում, Շուբարտու անվան տակ հասկացվում էր ողջ Հյուսիսային Միջագետքը ընդհուպ մինչև Հայկական Տավրոսի ճյուղավորությունները։ Ավելի ուշ շրջանում այդ անվամբ, Շուպրիա (Շուբրիա) ձևափո-*

---

1 *Մինչև այժմ այս հարցի շուրջ կատարված հետազոտությունների մասին տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայկական առաջին պետական կազմավորումները («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 91—120), Գ. Ա. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 6, էջ 53—61), Նույնի՝ Հին հայկական պետության առաջացումը («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 63—102), Հ. Ժամկոչյան, Հայաստանը նախնադարյան համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում («Հայ ժողովրդի պատմություն», պրակ. 1, Երևան, 1961, էջ 133—134),* C. Toumanoff, Studies in Christian Caucasian History. Georgetown, 1963, *էջ 32, 278—279, Ժ. Գ. Էլչիբեկյան, Երվանդունիների ծագման հարցի շուրջը («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 107—108) և այլն։*

2 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван. 1944. *էջ* 91. Г. А. Меликишвили, Наирп-Урарту, Тбилиси, 1954. *էջ 276, Ս. Տ. Երեմյան, Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 47)։*

3 И. М. Дьяконов. Асхро-вавилонские источники по истории Урарту («Вестник древней истории», 1951, № 2, *էջ 267—269)։*

4 *Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 214։*

5 *Նույն տեղում, էջ 200։*

խությամբ, կոչվել է... բարձր լեռնային շրջանը, ներկայիս Սասունը, ուր շատ երկար պահպանվել է սկզբնական խուրրիական բնակչությունը։ ...Սկսած 9-րդ դարից, Ուրարտուն ընդարձակվելով հասավ նաև Շուպրիա երկրին, բայց մինչ այդ երկիրն արդեն այնքան էր յուրացված նոր եկվորների՝ ուրումեացիների կամ արմենների կողմից, որ Շուպրիա անվան փոխարեն ուրարտական արձանագրություններում օգտագործվում են Ուրումե (var. Ուրմեուխի) և Արմե անունները»[6]։ Արմե-Շուպրիայի տեղադրության, ինչպես նաև Ուլլուբայի մասին հստակ պատկերացում է տալիս նաև Քուլիմերի (Քղիմար), Ուպումու (Ափում) և Աշշուրիքիշա (Քիշ) քաղաքների հիշատակությունն ասուրական և մասամբ ուրարտական աղբյուրներում[7]։

Մենուա (մ. թ. ա. 810—786), Արգիշտի Ա (մ. թ. ա. 786—764) և Սարդուրի Բ (մ. թ. ա. 764—735) ուրարտական թագավորների օրոք Արմե-Շուպրիան ռազմական գործողությունների թատերաբեմ էր։ Այսպիսով պատահական չէ Արմե-Շուպրիայի անջատումը Ուրարտուից՝ մ. թ. ա. VIII դ. վերջին տասնամյակներում տեղի ունեցած դեպքերից հետո, քանի որ տեղական ցեղային միությունն օգտվեց Ուրարտուի համար անբարենպաստ պայմաններից։ Ինչ վերաբերում է տարածքային կորստից հետո Ուրարտուի հետագա վիճակին, ապա Բ. Բ. Պիոտրովսկին Ռուսա Ա-ի (մ. թ. ա. 735—713) թագավորության մայրամուտին հաջորդած ժամանակաշրջանի վերաբերյալ գրում է. «Սեպագիր հուշարձանները վկայում են Արգիշտի Բ-ի (713—685) ինտենսիվ շինարարական աշխատանքների մասին երկրի կենտրոնում և մասնավորապես այն տեղերում, որտեղով անցել է Սարգոնի բանակը»[8]։ Հետաքրքիր է նշել, որ Ռուսա Բ-ն (մ. թ. ա. 685—645) արշավում է Մուշկինի, Խալթե և Խալիտու երկրների վրա[9]։ Կարելի է եզրակացնել, որ Արմե-Շուպրիան նշված և հետագա ժամանակաշրջաններում չի կազմել Ուրարտուի օրգանական մասը[10]։ Ուրարտուից և Ասորեստանից այնտեղ փախած ստրուկները և այլ դժգոհ տարրերը[11] ապաստան էին գտել այժմյան Սասունի լեռներում։ Դրա հետևանքով

---

6 Ս. Տ. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում («Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 61, 68), հմմտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 90—91 և «Вестник древней истории», 1951, № 2, էջ 261, 281, ծան. 15)։

7 «Вестник древней истории», 1951, № 2, էջ 299, 314, № 3, էջ 219, 221, Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи, М., 1960, № 41 $_{B_5}$, 40 л. с. B_5., «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 64 և 67, քարտեզ. «Արմե-Շուպրիա երկիրը XII—VIII դդ. մ. թ. ա.», տե՛ս նաև Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории Древней Армении, Ереван, 1956, էջ 141—142: Н. Адонц, նշվ. աշխ., էջ 200։

8 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 112։

9 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., № 278, էջ 341։

10 Արմե-Շուպրիան հանդիսացավ հայ ժողովրդի կազմավորման կենտրոններից մեկը։ Այս տեսակետից նշանակալից է Ս. Երեմյանի այն հետևությունը, որ հայ ժողովրդի ձևավորման կենտրոններից մեկը պատմական Հայաստանի տարածքում եղել է «Մոփք-Աղձնիք՝ Արևելյան Եփրատ-Արածանիի և Արևմտյան Տիգրիսի հովիտներում (Արմե-Շուպրիա)», («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 29)։ Այսպիսով՝ պատահական չէր, որ այստեղ առաջ եկավ առաջին հայկական պետական կազմավորումը։

11 «Вестник древней истории», 1951, № 3, էջ 218, 220։

Ասարխադդոնը մ. թ. ա. 673 թ. նոյեմբեր-դեկտեմբերին արշավանք ձեռնարկեց և դաժան հաշվեհարդար տեսավ նրանց հետ։ Ըստ երևույթին այդ արշավանքի պատճառն էր նաև Սինախերիբին (մ. թ. ա. 705—681) սպանողների՝ Արադ-Նիլլիլինի (Ադրամելեք) և Շարեցերի (Սարասար կամ Սանասար), ինչպես նաև այլ խռովարարների փախուստը Արմե-Շուպրիա։

Այս ենթադրությունը բխում է Ասարխադդոնի նամակի բովանդակությունից, որի համաձայն նրանք, «որոնք մեղք են գործել, արյուն են թափել, [...հրամանա]տարները, գավառապետները, հսկիչները, կառավարիչները, պետերը փախել են Շուպրիա»[12]։ Ամենայն հավանականությամբ, այստեղ հիշատակված են Սինախերիբի սպանության հետ կապ ունեցողները։ Այն, որ Սինախերիբի սպանությունը պատահական դեպք չէր, այլ մեծ խռովության արդյունք, իմանում ենք «Բաբելոնյան ժամանակագրության» այն հատվածից, որտեղ նկարագրված անցքերը հաջորդում են Սինախերիբի սպանությանը. «Տեբեթ ամսվա 20-րդ օրից մինչև ադդար ամսվա 2-րդ օրը Ասորեստանում շարունակվում էր խռովությունը։ Ադդար ամսվա (՞) 8-րդ օրը Աշշուրախիդդինը բարձրացավ Ասորեստանի դահը... 2-րդ տարում (679)...։ (Կիմմ)երները արշավեցին Ասորեստանի վրա և Ասորեստանում ջախջախվեցին...[13]։ Աշշուրխադդինի 8-րդ տարում (մ. թ. ա. 673) տեբեթ ամսին, օրը— ջախջախվեց, գրավվեց շուպրիացիների երկիրը»[14]։

Ինչպես տեսնում ենք, մ. թ. ա. 681/680 թթ. խռովությունը մեկ ամսից ավելի է տևել։ Դրա մասին իմանում ենք նաև Աստվածաշնչի «Գիրք թագաւորութեանց» Դ գրքից. «Եւ չուեաց գնաց, և դարձաւ Սեննեքերիմ արքայ ասորեստանեայց՝ և բնակեաց ի Նինուէ։ Եւ եղև մինչդեռ երկիր պագանէր ի տան Նեսրաքայ աստուծոյ իւրում, Ադրամելեք և Սարասար, որդիք նորա։ Հարին զնա սրով, և ինքեանք զերծան յերկիրն Արարատայ և թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա»[15]։

Այդ փաստը արձանագրվել է նաև հայ պատմագրության մեջ։ Մովսես Խորենացին, խոսելով Սեննեքերիմ (Սինախերիբ) թագավորի սպանության մասին, նշում է, որ Ադրամելեքը և Սանասարը. «եկին փախստական առ մեզ։ Յորոց զմինն յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր բաջ նախնին, այս ինքն է

---

12 Նույն տեղում, էջ 218։

13 Շարունակությունում խոսվում է Ասսարխադդոնի թագավորության IV տարվա մասին։

14 «Вестник древней истории», 1951, № 3. էջ 215։ Դ. Ուայզմանը Ասարխադդոնի մ. թ. ա. 673 թ. արշավանքը դեպի Շուպրիա բացատրում է կիմմերների կողմից սպառնացող վտանգով (D. J. Wiseman. The Vassal-Treaties of Esarhaddon, „Iraq", vol. XX, London, 1958, էջ 10), այնինչ այն, ինչպես երևում է, ուներ սոցիալ-քաղաքական դրդապատճառներ։

15 «Գիրք աստուածաշունչ հին եւ նոր կտակարանաց». ի Վենետիկ, 1860, գլ. ԺԹ, 36—37, էջ 347։

Դ. Ուայզմանը. հիմնվելով միայն «Աստվածաշնչի» հաղորդման վրա, ընդհանուր ձևով նշում է, որ խռովարարները ապաստան գտան Ուրարտուում (D. J. Wiseman, նշվ. աշխ., էջ 6)։

դԱնասարն. և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն ասացեալ լեառն»[16]։

Ուրարտուն այդ ժամանակ բարիդրացիական հարաբերությունների մեջ էր Ասորեստանի հետ։ Ուրեմն սպանության մասնակիցները և նրանց միացած խռովարարները չէին կարող ապաստանել Ուրարտուում։

Աստվածաշնչի աղբյուրին Արմե-Շուպրիան հայտնի է եղել Արարատ (=Ուրարտու) անունով։ Աստվածաշնչի վրացերեն թարգմանությունում նրան հոմանիշ է «Սոմխիթի»—«Սոմխեթին», այսինքն՝ «Հայք»—Հայաստանը[17]։ Պատմահայրը, ամենայն հավանականությամբ, Սենեքերիմի սպանության և հարակից հարցերի մասին տեղեկություն է քաղել «Աստվածաշնչի» վերը նշված հատվածից, ուստի և առանց վարանելու «Արարատ» անվան փոխարեն (որը պետք է հասկանալ ոչ թե Թմանի մոտ գտնվող լեռը, այլ Ուրարտու) ասում է «առ մեզ»։ Այսպիսով կասկած չի հարուցում, որ Սենեքերիմին սպանողները և նրանց կողմնակիցները ապաստան էին գտել Արմե-Շուպրիայում[18]։ Դրա վառ ապացույցն է Սիմ լեռան հիշատակությունը։

Ինչ վերաբերվում է «Սկայորդի» անվանը, ապա դրա ստուգաբանությունն առաջին անգամ տվել է Գ. Ղափանցյանը. «Skai-ordi» չի նշանակում տառացի սկայի (սակի) որդի, այլ՝ սակ ցեղից, սակ տոհմից»[19]։ Կարելի է ասել ավելին՝ «Սկայ» բառի կողքին առկա է «որդի» բառը ստացված հապլոլոգիայով «ururdi» ցեղանունից, որը հանդիպում է Սարղուրի Բ-ի արձանագրությունում[20]։ Գ. Ղափանցյանը առաջինը գտավ, որ այն կարող է նշանակել «խնամելի և հարազատ ժողովուրդ, որպես երկրի գլխավոր ժողովուրդ»[21]։ Նա «Սկայորդի» անվան մեջ ճիշտ է անջատում «ordi» մասը։ Ընդունելով այդ, գտնում ենք, որ կապ գոյություն ունի «ururdi» և «ordi» բառերի միջև, քանի որ, ինչպես ինքն է նշում, «o» ձայնավորը բևեռագրով արտահայտվում է «u» կրությամբ»[22]։ Այնպես որ «ururdi» պետք է հնչեր «orordi»[23] և հապլոլո-

---

16 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 70։ Ինչպես նշում է Ս. Երեմյանը, «Հայկական էպոսը նույնպես հաղորդում է այդ իրադարձության մասին և. Սանասուն կամ Սասուն դավառի անվանումը կապում է Սանասարի անվան հետ, ընդ որում նրանից և Ադրամելեքից է սերում «Սասնա ծռեր» Մհերին ու Սասունցի Դավթին» («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 50)։

17 Նույն տեղում, էջ 50—51։

18 Հմմտ. Б. Б. Пиотровский. О происхождении армянского народа, Ереван, 1948, էջ 20։

19 Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 217, ծան. 1։

20 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, 155G$_{11}$, 288. ururdi տե՛ս նույն տեղում, էջ 412։ Գ. Մելիքիշվիլին այն բացատրում է որպես որոշակի կարգի մարդկանց անվանում (նույն տեղում, էջ 289, ծան. 8)։

21 Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 133։

22 Նույն տեղում, էջ 226։ Ի. Մ. Դյակոնովը դրում է. «Հայկական սատրապությունները բաբելոնացիների մոտ շարունակվում էին անվանվել «Ուրարտու» (ավելի ճիշտ "Urastu" կարդա "*Oralt") (И. М. Дьяконов, История Мидии, М., 1956, էջ 334)։

23 Այս տեսակետից հետաքրքիր է Ս. Երեմյանի նշումը. «Օրդոք, ինչպես և Որթք, Որդորու, Որդսպու տեղանունների մեջ պահպանվել է ուրարտացիներ նշանակող էթնիկական անունը» («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 115)։ Ըստ նրա բանավոր հաղորդման՝ Պտղոմեոսի «Աշխարհագրությունում» Հայաստանում հիշատակվող Ὀβορδηνή կամ Βορδηνή (Claudii Ptolemaei Geographia, Parisiis, 1901, ed. C. Müllerus. vol. primi, pars 2. V. 12. 6, ծան. 11) անհրաժեշտ է ուղղել Ὀρορδηνή կամ Ὀρδηνή, որը նույնն է, ինչ

գիայով «urdi»=«ordi»։ Այս տեսակետից հետաքրքիր է «ժողովուրդ» բառի ստուգաբանությունը[24]։ Մեր կարծիքով այն բարդ բառ է, կազմված «ժողով» և «ուրդ» բաղադրիչներից, որոնցից վերջինը առաջացել է հետևյալ կերպ՝ „ururdi"=„orordi">„urdi"=„ordi"<„urd"=„ord", քանի որ ինչպես նշում է Ի. Դյակոնովը, «վերջին e/i, ըստ երևույթին, թույլ ամփոփված ձայնավոր էր, վերանալու միտումով»[25]։ Նշենք, որ Գ. Ղափանցյանը Անձիտի գավառի Խարբերդի դաշտում հիշատակվող «որտա» ցեղանունը հապլոլոգիայով հանում է «ororta-ից» (ամենայն հավանականությամբ նկատի ունի «orordi»), վերջինս համարելով «arart» բառի բնափոխությունը[26]։

Կարելի է տեսնել, որ „ururd(i)" || „orord(i)" || „olord" || „alarod(oi)" || Արարադ||Արարատ||Այրարատ։

Ինչպես տեսնում ենք, ururdi-ն մասնակցել է «ժողովուրդ» բառի կազմավորմանը։ Վերջինս նախնական իմաստով կարող էր նշանակել «ուրարտացիների ժողով» և ապա վերածականանալով ստանալ ընդհանրապես «մարդկանց ժողով» իմաստը։ Դրա հետ մեկտեղ ururdi բառը կորցրել է նախնական նշանակությունը, վերածվելով՝ ուրդ(=որդ(ի)) ածանցի (ժողով ururd(i)>urd)։ Այն «ժողովուրդ» բառում օգտագործվելով տարբեր էթնիկական միավորների կապակցությամբ, մասնակցել է նաև տարբեր բառակապակցություններում կոնկրետ էթնիկական միավորի գաղափարով, ինչպիսին է, օրինակ, «Սկայորդին», որը նշանակելով «սկայ» (սակ) էթնոսից, տվյալ դեպքում այնքան է նեղացել իմաստով, որ ստացել է սեփական անվան նշանակություն[27]։ Այդպիսի անուն հնարավոր է, որ հանդիպի մ. թ. ա. VII դ. արձանագրություններում։

Ըստ երևույթին Մովսես Խորենացուն, կամ ավելի շուտ նրա աղբյուրին, հայտնի է եղել սկյութների իշխանությունը[28] Հայկական լեռնաշխարհի որոշ

Մովսես Խորենացու հիշատակած «Որդունի» նախարարության անվանումը (Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 38, 114, 258)։ Բառիս -(ղ)ոնի մասնիկը բնորոշ էր հույների կողմից տրվող տեղանուններին (օրինակ՝ Σοφηνή, Ἀκιλισηνή և այլն)։ Այնպես որ մնում է orord(e)=o-rord(i).

24 Հ. Աճառյանը այն մեկնում է «ժողով» բառի տակ. առանց ստուգաբանության (Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1973, հ. 2, էջ 232—233)։ Այն չի ստուգաբանում նաև Ս. Էլոյանն իր «Ածանցները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ (Երևան, 1963, էջ 168), ուր գրում է. «-ուրդ ածանցով ևս պահպանված են մի քանի կազմություններ, որոնցում -ուրդ ածանցը վաղուց արդեն իմաստի մթացում է ապրել և բարացել, օրինակ՝ ...ժողովուրդ...»։

25 «Материалы к фонетике урартского языка». էջ 49 (сб. «Вопросы грамматики и истории восточных языков». М.—Л., 1958).

26 Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն, նշվ. աշխ., էջ 134, 226։

27 Նմանօրինակ բառերի շարքում կարելի է դասել նաև «Սևորդի» ցեղանունը, որը նույնպես երկու մասից է կազմված՝ «Սև» և «որդի», որոնցից առաջինը Ս. Տ. Երեմյանի բանավոր հաղորդմամբ՝ կապված է Σαγάρτιοι (H e r o d o t u s, (The Histories). With an English transl. by A. D. G o d l e y, in 4 vol., Mass.—London, 1946—1960. I. 125) իրանական ցեղի անվան հետ, իսկ երկրորդը, ինչպես վերը նշեցինք, էթնիկական երանգ ունեցող ածանց է։

28 Կիմերների և ապա սկյութների քոչվոր ցեղերը մ. թ. ա. VIII—VII դդ. ղդալի փոփոխություն մտցրին Առաջավոր Ասիայի քաղաքական վիճակում (տե՛ս Ի. Մ. Դ ь я к о н о в, նշվ. աշխ., էջ 228—292, Б. Б. П и о т р о в с к и й, Ванское царство, էջ 232—256։ Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու

տարածքի վրա, որքանով կարելի է դատել Սկայորդի, Պարույր, «Ասքանազյան գունդ» և այլ անուններից[29]։

Հայկական աղբյուրներում Արմե-Շուպրիայի, որպես Հայաստանի մաս, հանդես գալու մասին է խոսում նաև այն փաստը, որ ասորեստանցիների տիրապետությունը կապվել է կիսաառասպելական Սեմիրամիսի (Շամիրամի)[30] հետ և այդ անցքերը պետք է վերաբերեն Արմե-Շուպրիայում Ասորեստանի երկու տասնամյակ (մ. թ. ա. 673—652) տևած գերիշխանությանը, դրա դեմ մղված պայքարին և արձագանքներին։ Այդ տեղեկությունների բնույթի մասին Ս. Երեմյանը գրում է. «Հայկական պատմական ավանդություններում Ասորեստանի տիրապետության ժամանակաշրջանի վերաբերյալ պահպանված հուշերը, հավանաբար, վերաբերում են հենց այդ քսանամյակին...»[31]։

Հայ մատենագիրների մոտ կիսաառասպելական Շամիրամի կերպարի ընդգրկումը և, որոշ վերապահությամբ, նրա ժամանակաշրջանի համընկնումը Ասարխադդոնի կողմից մ. թ. ա. 673 թ. Արմե-Շուպրիայի նվաճման հետ, վկայություն է այն մասին, որ, չնայած որոշ անախրոնիզմին, հայկական ավանդությունում որոշ չափով արտացոլվել են մ. թ. ա. VII դ. առաջին կեսում Արմե-Շուպրիայում տեղի ունեցած դեպքերը։

Հայկական ավանդությունում բնորոշ է արալեզների՝ սրբազան շների հանդես գալը։ Սակայն շան սրբագործությունը բնորոշ էր իրանական աշխարհին և այնտեղից պետք է անցներ հայկական ավանդություն[32]։ Ըստ երևույթին, դրա բերողներն են եղել սկյութները, որոնք այս շրջանում տարածվեցին Առաջավոր Ասիայում[33]։ «Սակերը,— գրում է Ստրաբոնը,— ասպատակում

Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 89—116)։

29 Սրանց շարքին թերևս կարելի է դասել նաև «Ասպակունեաց ձոր» աշխարհագրական անունը, որի մասին Ս. Տ. Երեմյանը գրում է. «Հայտնի է, սկյութների Իշպակա ցեղապետը, որի անունը նշանակում է կամ «Aspaka»՝ «ձիավոր», կամ «Spaka»՝ «շուն։ «Սկայորդին» կարող է լինել և «S[pa]kay-ordi», -pa- վանկի հետագա սղմամբ։ Այս դեպքում «Aspaka= «Spaka-ն» կապվում է Սասունի մասը կազմող «Ասպակունեաց ձոր» գավառի անվան հետ, որը պետք է լիներ Արմե-Շուպրիայում իշխող «Ս(պա)կայորդու» դինաստիայի կենտրոնը և պետք է ենթադրել այժմ Քաղքիկ կոչվող գյուղի տեղում» («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 98, ծան. 28)։

30 Մովսես Խորենացի, էջ 64, «Սեբէոս եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 6։

Այն, որ առասպելում նկարագրված դեպքերի արեալը համապատասխանում է Հայաստանի հարավին, նաև երևում է Արայի որդի՝ Կարդոսի անունից, որը, ինչպես ցույց է տվել Ք. Պատկանյանը, կարդուխների էպոնիմն է և որից նախկինում Արաբադ կոչվող երկիրը հետագայում անվանվել է Կորդուք (К. П. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб, 1881, էջ 81, հմմտ., Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории Древней Армении, Ереван, 1956, էջ 154)։

31 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 97։

32 Հմմտ. Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 25 և 27։ Գ. Ղափանցյանը գրում է. «Լեմանը կարծում էր, որ Կոտեսիասի կողմից ավանդված Շամիրամյան զրույցները ծագել են ոչ թե Ասորեստանում, այլ մեդական շրջանում, որտեղից անցել են Հայաստան... Արա-Շամիրամ հայ առասպելը հիմնովին ձևակերպվել է 7—6-րդ դարերի միջև»։

33 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 6—13։

էին ինչպես կիմերները և տրերները[34] հեռավոր և մոտ տարածության վրա։ Այդպես նրանք զավթեցին Բակտրիանան, իսկ Հայաստանում՝ լավագույն տարածքը, որին թողին իրենց անունը՝ Սակասենե։ Նրանք հասան ընդհուպ մինչև կապադովկացիների երկիրը, մասնավորապես նրանց մոտ, ովքեր ապրում են Եվքսինյան ծովի մոտ և այժմ կոչվում են պոնտիկներ։ Այն ժամանակ այն երկրում գտնվող պարսկական զորավարները հարձակվեցին նրանց վրա գիշերը՝ ավարը բաժանելուց հետո, համաժողովրդական տոնի ժամանակ և խսպառ ոչնչացրին այդ ցեղը»[35]։

Հերոդոտը այս նույն անցքերը նկատի ունի՝ գրելով. «Սկյութները Եվրոպայից դուրս մղեցին կիմերներին և նրանց հետապնդելով (Ասիայում) ներխուժեցին Մեդական հողը։ Սկյութները...գնացին վերին, ավելի երկար ճանապարհով, աջ կողմում թողնելով Կովկասյան լեռները։ Այստեղ մեդացիների և սկյութների միջև ճակատամարտ տեղի ունեցավ։ Մեդացիները պարտվեցին... Իսկ սկյութները իրենց գերիշխանությունը տարածեցին ամբողջ Ասիայի վրա...։ Սկյութները 28 տարի իշխեցին Ասիայում...[36]։ Մի անգամ Կիաքսարը և մեդացիները բազմաթիվ սկյութներ հրավիրեցին, հարբեցրին և ապա կոտորեցին։ Այդպիսով մեդացիները վերականգնեցին իրենց տերության նախկին վեհությունը»[37]։

Ինչպես Հերոդոտը, այնպես էլ Ստրաբոնը նկարագրում են մ. թ. ա. VII դ. առաջին տասնամյակների[38] և երկրորդ կեսի անցքեր։ Դրանցից երևում է սկյութների զբաղեցրած տարածքը՝ Սակասենը (Շակաշենը), որտեղից նրանք կարող էին գնալ ինչպես Մանա, այնպես էլ արևմուտք՝ Կապադովկիա, Պոնտոս և Պաղեստինյան Ասորիք։ Արևմտյան արշավանքների ժամանակ սկիթ է տեղի ունենար նրանց բնակեցումը Արմե-Շուպրիայում[39]։

---

34 Սակերը սկյութական ցեղ էին։ Ինչպես հետևում է Ստրաբոնի վկայություններից, տրերները արշավանքներում սերտորեն գործում էին կիմերների հետ (Strabo. The Geography With an English transl. by H. Jones, in 8 vol. Mass.—London, 1954—1961; I. 3. 21 XIV, I. 40 և այլն)։

35 Strabo, XI. 8. 4.

36 Ի. Դյակոնովի ճշտմամբ՝ սկյութները Ասիային տիրել են մ. թ. ա. 652—625 թթ. (И. М. Дьяконов. նշվ. աշխ., էջ 289)։

37 Herod, I. 103—106.

38 Մ. թ. ա. VII դ. 70-ական թվականներին ասուրական աղբյուրները հիշատակում են «Իշկուզա երկրի թագավոր» Պարտատուային։ Ի տարբերություն Ի. Դյակոնովի, Դ. Ուայզմանը կարծում է, որ իշպական է հաջորդել Պարտատուային և, վերջինիս ամուսնությունը ասորեստանյան արքայադստեր հետ տեղի է ունեցել մ. թ. ա. 679 թ. (D. J. Wiseman, նշվ. աշխ., էջ 10, ծան. 98)։ Ի. Դյակոնովի ենթադրությունն ավելի հավանական է։ Պարտատուայի ու ասորեստանյան արքայադստեր ամուսնությունից հետո Սկյութական թագավորությունը դառնում է Ասորեստանի հավատարիմ դաշնակիցը (տե՛ս И. М. Дьяконов. նշվ. աշխ., էջ 272—273)։ Ըստ երևույթին, այդ դաշինքն ապահովում էր Ասորեստանի տիրապետող դիրքը։ «Իշկուզա երկիրը» ընդգրկում էր Կովկասից մինչև Ուրմիա լճի ավազանը։ Այսպիսով, սկյութները VII դ. առաջին կեսում Առաջավոր Ասիայում նշանակալից քաղաքական ուժ էին։

39 Արմե-Շուպրիայում բազմազան էթնիկական տարրերի՝ տեղական խուրրի-ուրարտական, եկվոր մուշկերի-արիմների կոգքին ի հայտ են գալիս սկյութները։ Հավանաբար այդ ցեղերը գտնվում էին ռազմական դեմոկրատիայի փուլում։ Երկրի տեղական ավագանու կողքին հանդես է գալիս սկյութական ավազանին։ Կարևորն այն է, որ Արմե-Շուպրիայում այնպիսի պայմաններ էին ստեղծվել, որ խոշընդոտներ չէին ստեղծվում խաղաղ ճանապարհով բնակություն հաստատող եկվոր տարրերի համար («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 93—

Մ. թ. ա. 653 թ. ապստամբում է ասորեստանյան թագավոր Աշշուրբանապալի (մ. թ. ա. 669—մոտ. 633) եղբայր Շամաշշումուկինը, որը Ասորեստանի վասալ Բաբելոնի թագավորն էր[40]։ Այդ ապստամբությունը, ինչպես նաև մինչ այդ Եգիպտոսի անջատումը[41] Ասորեստանին ծանր կացության մեջ դրեցին։ Ինչպես ճիշտ կռահել է Ի. Դյակոնովը, Ասորեստանի դեմ մարտնչող երկրների թվում էր նաև Մարաստանը, որի դեմ Աշշուրբանապալը հանեց սկյութներին։ Սրանց զորքը, ինչպես վկայում է Հերոդոտը. «ղեկավարում էր Մադիոսը, Պրոտոթիոսի որդին...»[42] և հենց այդ ժամանակվանից ի վեր 28 տարի սկյութները տիրեցին Ասիային։

Թվում է թե Ասորեստանի դիրքերը նորից ամրապնդվում են։ Այդ է վկայում նաև մ. թ. ա. 639 թ. Աշշուրբանապալի մոտ Սարդուրի Գ-ի (մ. թ. ա. 645—635) ուղարկած պատգամավորության մասին եղած արձանագրությունը. «Սարդուրին, լսելով իմ հզորության և սխրագործությունների մասին, որոնք ինձ շնորհել են մեծ աստվածները, ողջունեց իմ մեծությունը, ինչպես որդին հորը և դրան համապատասխան գրել է. ողջույն թագավորին՝ իմ տիրոջը»[43]։

Ամենայն հավանականությամբ Ուրարտուին այդ ժամանակ սպառնում էին Մադիոսի զորքերը։ Աշշուրբանապալը, ինչպես Մեդիայի, այնպես էլ Ուրարտուի հանդեպ միևնույն քաղաքականությունն էր վարում՝ նրանց դեմ հանելով իր դաշնակից սկյութներին։ Այդ տարիներին Ուրարտուի տարածքում տեղի ունեցող դեպքերի կապակցությամբ Ս. Երեմյանը գրում է. «Ըստ երևույթին այդ թագավորից (Սարդուրի Գ-ից— Է. Դ.) հետո ուրարտական դինաստիան անկում է ապրում և սկյութները (հավանաբար հայերի հետ միասին) դառնում են կացության տերը» և ապա եզրակացնում է, որ «Ուրարտուում թագավորական իշխանության անկման և սկյութների տիրապետության ժամանակը համապատասխանում է մոտավորապես 635—624 թվականներին (մ. թ. ա.)»[44]։

Մ. թ. ա. VII դ. վերջին քառորդում Առաջավոր Ասիայում քաղաքական հզոր ուժ է հանդես գալիս՝ Մեդական աշխարհակալությունը, որի թագավորն էր Կիաքսարը (մ. թ. ա. 625—584)։ Նրա գլխավորությամբ տապալվեց սկյութների գերիշխանությունը։ Վերը նշվածի հետ մեկտեղ Հերոդոտի վերոբերյալ հաղորդմանը համապատասխանում են Ստրաբոնի աշխատության հետևյալ տողերը. «Կյուրոսը արշավեց սակերի վրա, սակայն, պարտվելով մարտում,

---

94)։ Դրան նպաստում էր այն, որ Արմե-Շուպրիա միությունը ցեղային միություն էր («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 45)։ Այդ բարենպաստ պայմաններում էին Արմե-Շուպրիայում ապաստանում Ասորեստանից ու Ուրարտուից այստեղ եկող փախստականները։ Կարելի է նաև ենթադրել, որ Արմե-Շուպրիայում ռազմական ուժ էր ստեղծվում (որում ընդգրկվեցին նաև սկյութները և վերը նշված փախստականները), որը վտանգ էր ներկայացնում նաև Ասորեստանի համար և թերևս նաև այդ սպառնալիքի վերացմանն էր ուղղված Ասարխադոնի մ. թ. ա. 673 թ. արշավանքը։

[40] И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 287։ Հմմտ. D. J. Wiseman, նշվ. աշխ. էջ 7։ Վերջինիս կարծիքով՝ Շամաշշումուկինը ապստամբել է մ. թ. ա. 651 թ. (էջ 8)։

[41] В. В. Струве. Хронология VI века до н. э. в труде Геродота («Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии», Л., 1968, էջ 90):

[42] Herod, I, 103.

[43] Б. Б. Пиотровский. Ванское царство, էջ 115։

[44] «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 98։

փախավ»[45]։ Ապա Ստրաբոնը պատմում է մեդական զորավարի ռազմական խորամանկության և սակերի կոտորածի մասին։ Այդ իրադարձությունները, ինչպես վերը տեսանք, Ստրաբոնը նկարագրում է անմիջապես նրանց կողմից Շակաշեն-Սակասենեն զբաղեցնելուց հետո, այնինչ այդ դեպքերի միջև ընկած են մի քանի տասնամյակներ։

Անհրաժեշտ է նաև նշել, որ այստեղ Ստրաբոնը Կիաքսարի գործողությունները վերագրել է Կյուրոս Բ Մեծին (մ. թ. ա. 550—529)։

Հենվելով Գ. Ղափանցյանի, Բ. Պիոտրովսկու, Ի. Դյակոնովի հետազոտությունների վրա և ևս մեկ անգամ համեմատելով Հերոդոտի և Մովսես Խորենացու տվյալները Պրոտոթիոս=Պարտատուայի և Պարույրի վերաբերյալ, Ս. Երեմյանը գրում է. «Հերոդոտը 612 թվականի իրադարձությունների մասնակից է դարձրել ոչ թե նրան, այլ նրա որդուն՝ սկյութական Մադիոս թագավորին, որը ժամանակով ավելի մոտ էր դրանց։ Այս նկատառումները թույլ են տալիս ենթադրելու, որ Կիաքսարին օգնության եկած «սկյութական» զորքը գլխավորել է ոչ թե Մադիոսը, Պրոտոթիոսի որդին, այլ հին հայկական աղբյուրների նշած Պրոտոթիոս-Պարույրը...։ Վերը բերված տեղեկություններն ու նկատառումներն իրավունք են տալիս ենթադրելու, որ Նինվեի ավերումից և ասորեստանյան պետության կործանումից հետո Կիաքսարը Պարույրին ճանաչում է Արմե-Շուպրիա երկրի թագավոր...։ Այսպիսով, Ասորեստանի անկման ժամանակաշրջանում Հայաստանում կառավարում էր «որդի Սկայորդույ»[46] Պարույրը, որը մեդական «Վարբակ» Կիաքսար թագավորին ցույց տված օգնության համար նրա կողմից ճանաչվեց Հայաստանի թագավոր»[47]։

Այսպիսով, Նինվեի կործանման տարին՝ 612 թ. որոշիչ էր նաև Հայաստանի պատմության համար։ Այդ ժամանակ Արմե-Շուպրիայի թագավորը Պարույրն էր[48], իսկ Ուրարտուի թագավորն էր Ռուսա Գ-ն, «Էրիմենայի որդին»։

Ի տարբերություն այն կարծիքի, որ Էրիմենան, որպես Ուրարտուի թագավոր, իրոք գոյություն է ունեցել[49], մի շարք գիտնականներ գտնում են, որ Ռուսա Գ-ի հայրանունը («Էրիմենախի»)[50] անհրաժեշտ է հասկանալ Ռուսա «Էրիմենա (Արմենիա) երկրի ցեղից»—«Էրիմենական»[51]։ Նշենք երկու փաստարկ, որոնք խոսում են «Էրիմենա» անվան էթնիկական բնույթի մասին։ Ստրաբոնը գրում է, որ Պոսեյդոնիոսի (մ. թ. ա. մոտ 135—մոտ 51) հաղորդման համաձայն արաբները երեք ցեղ են կազմել՝ τοὺς μὲν Ἀρμενίους, τοὺς δὲ

---

45 Strabo, XI. 8. 5.

46 Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ «որդի Սկայորդույ» նշանակում է ոչ թե որդի սկյութի որդու, այլ սակ ցեղին պատկանող անձնավորության որդի, այսինքն՝ «Սակացու որդի»։

47 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 101—102։

48 Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, էջ 21, 24։ И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 313, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 98։

49 Б. Б. Пиотровский, Ванское царство, էջ 115; И. М. Дьяконов, Урартские письмена и документы, М.—Л., 1963, էջ 28, 34; Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, էջ 426։

50 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., 287$_1$, 296a$_1$, 295a$_1$.

51 И. И. Мещанинов, К анализу имени Эримена («Язык и мышление»), 1933, էջ 37, Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 221, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 108։

'Αραμαίους, τοὺς δὲ 'Αραμβοὺς[52]։ Ստրաբոնը նշում է, որ եթե արաբները երեք ցեղերի են բաժանվել, ուրեմն կարելի է ենթադրել, որ դրանք ունեցել են բազմաթիվ անուններ։ Սակայն նա գտնում է, որ „'Εφεμνοὺς" չպետք է լինի, քանի որ այն ավելի բնորոշ էր եթովպացիներին"[53]։ Այստեղ առկա է ցեղանունների բացահայտ շփոթություն։ Հնում հայերին (արմեններին), որոնց էպոնիմը Հայկի կողքին նաև Արամանեակ և Արամ էր[54], շփոթում էին արամեացիների հետ, որոնց էպոնիմը նույնպես Արամ էր[55]։ Մովսես Խորենացին գրում է, որ Արամի անունով «զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմենիկք»[56]։ Իսկ քանի որ արամեացիները նույն արաբներն էին, բաղկացած տարբեր ցեղերից, ուստի անտիկ հեղինակները երբեմն շփոթում էին «արմեն»-հայերին «արամեացի»-արաբների հետ[57]։ Այդ նաև արդյունք էր այն բանի, որ Հայաստանին հարավից հարևան էին արաբական ցեղերը[58]։ Այդ շփոթության ցայտուն օրինակ է Ստրաբոնից քաղված հատվածը։ Տվյալ դեպքում „'Αρμένιοι" ցեղանվան կողքին ունենք „'Εφεμνοί" բառը, որը իմաստավորվելով «սևեր», ընկալվել է որպես եթովպացիների հատկանիշ։ Որ նշված բառերը կապ ունեն միմյանց հետ, երևում է նաև այն փաստից, որ Ստրաբոնը հաջորդ նախադասությունում բերում է Հոմերոսի հիշատակած „ἄριμοι"[59] ցեղը, որը ըստ Պոսեյդոնիոսի բնակվում էր Ասորիքում և նույն արամեացիներն էին[60]։ Սակայն, ինչպես ենթադրում է. Յ. Մարկվարտը, ի դեմս „ἄριμοι" ցեղի, հնագույն հիշատակություն ունենք արմենների մասին[61]։

Երկրորդ փաստարկը բխում է Հովսեպոս Փլավիոսի հաղորդումից «Հայաստանի հիմնադիր Ուրոսի» ('Αρμένιαν δὲ Οὖρος) մասին[62]։ Այդ անվանաձևը ամենայն հավանականությամբ համապատասխանում է ուրարտական Ռուսա անվան ասուրական՝ Ուրսա ձևին։ Հետևաբար «էրիմենախին» կարող

---

52 Strabo, XVI. 4. 27.

53 Նույն տեղում։

54 Մովսես Խորենացի, էջ 17, 19, «Вестник древней истории», 1951, № 2, էջ 299—300։ Գ. Տիրացյանը գրում է. «Ինքը՝ Արամը, հավանաբար մի կողմից արձագանք է ուրարտացիների թագավոր Արամեի, մյուս կողմից՝ հանդես է գալիս որպես հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած մյուս շերտի՝ փոյուգացիների հարևան արմենների էպոնիմ» («Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 480)։

55 'Αραμαίους δὲ Ἄραμος ἔσχεν (Josephus Flavius, Jewish Antiquities. With English transl. by H. Thackeray, Mass.—London, 1961, vol. IV, I 144, այսուհետև՝ Flav) և այլ։

56 Մովսես Խորենացի, էջ 42։

57 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 233, ծան. 10։

58 Plinius Secundus, Natural History, in 10 vol. With an English transl. by H. Rackham. Mass.—London, 1957, II, VI. XXX. 118.

59 Homer, The Illiad, in 2 vol. With an English transl. by A. T. Murrey. Mass.—London. 1957—1960, II. 783.

60 Strabo, XVI. 4. 27.

61 J. Markwart. Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation. Berlin, 1919, էջ 67. Հմմտ. Влад Бэнэцяну, Некоторые вопросы этногенеза армян («Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 117)։

62 Flav., Ant., I. 145.

էր էթնիկական ծագում ցույց տալ, հնչելով մոտավորապես այնպես, ինչպես օրինակ Իսիդոր Քարակացին (մ. թ. ա. I դ.) հիշատակում է Տիգրան Բ-ին (Τιγρανης ὁ Ἀρμένιος)[63]։ Հնարավոր է նաև, որ Էրիմենա (Արմեն) ցեղանունը Առաջավոր Ասիայի երկրներում հիշատակվեր իբրև անձնանուն, էթնիկական ծագում ցույց տվող հատկանիշով[64], ինչպես այժմ միայն հայերն են օգտագործում Արմեն անունը։

Հաջորդ տասնամյակի դեպքերը որոշիչ էին Ուրարտուի նակատագրի համար։

Ի. Դյակոնովը Նարոպալասարի թագավորության 17-րդ տարվա վերաբերյալ պահպանված արձանագրությունը առաջարկում է կարդալ նաև հետևյալ կերպ. «...Ակկադի (այսինքն Բաբելոնի) թագավորը մոտեցավ [խառան քաղաքին], մարտ [տվեց] Ծալա երկրում [...]շատ երկրների քաղաքները [նվաճեց և] այրեց կրակով։ Այդ ժամանակ [Կիաքսարի՝ Ումմանմանդայի թագավորի] զորքը [արշավեց] մինչև Ուրաշտու քաղաքի գավառը»[65]։ Ի. Դյակոնովի կարծիքով խոսքը այստեղ դնում է մ. թ. ա. 609 թ. դեպի Ուրարտու կատարված մեդական արշավանքի մասին։ Ի. Դյակոնովը նաև հնարավոր է համարում, որ այդ արշավանքը միացյալ էր՝ Մեդիայի և Բաբելոնի կողմից։ Ապա նա գրում է. «կարելի է համոզվածությամբ եզրակացնել, որ արդեն Մեդիայի և Բաբելոնի միջև «ասորեստանյան ժառանգության» բաժանման պահին մ. թ. ա. 605 թ. Ուրարտուն գտնվում էր Մեդիայի գերիշխանության տակ»[66]։ Ի. Դյակոնովը այդ տեսակետն է պաշտպանում նաև իր հաջորդ աշխատություններում[67]։ Եթե Ի. Դյակոնովի վերականգնումը ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ մ. թ. ա. 609—605 թթ. ժամանակամիջոցում տեղի ունեցած պայքարի ընթացքում Ուրարտուի (որտեղ, հավանական է, մինչ այդ թագավորում էր հայկական թագավորը Ուրարտուի դինաստիական Ռուսա (Գ) անունով)[66], Վանա լճի ավազանի տարածքը միացվել է Արմե-Շուպրիային, որը Մեդիայի դաշնակիցն էր, և ստեղծվել է առաջին միացյալ Հայկական թագավորությունը[69]։

Այս ժամանակաշրջանում պետք է տեղի ունենար այդ միավորումը, քանի որ մ. թ. ա. VI դ. առաջին տասնամյակներում հիշատակվում է միայն մեկ ամբողջական երկրի՝ Հայաստանի թագավորը։ Դրա ապացույցն է նաև «հայ»

---

[63] Isidori Characeni, Mansiones Parthicae. VI ed. K. Müller. Geographi Graeci Minores. Hildesheim. 1965, t. VI.

[64] Հնում դոյություն ունեին էթնիկական ծագում ցույց տվող բազմաթիվ անձնանուններ, օրինակ. Μαρδόνιος (Herod. VI. 43), Μαρδόντης (Herod. VII. 80), Σαρματας („Корпус Боспорских надписей" (այսուհետև՝ КБН), М.—Л., 1965, 1134, 27, Σίνδος (КБН, 1137, A1. 5), Ἀβαζίων (КБН, 774), Κολχος (КБН, էջ 183) և այլն։

[65] И. М. Дьяконов, Последние годы Урартского государства («Вестник древней истории», 1951. № 2, էջ 31)։

[66] Նշվ. աշխ., էջ 32։

[67] И. М. Дьяконов, Урартские письмена и документы. էջ 28, ծան. 40։

[68] «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 108։

[69] Խոսելով մ. թ. ա. VII դ. վերջի և VI դ. սկզբի ռազմա-քաղաքական իրադրություններին Արմե-Շուպրիայի ունեցած ակտիվ մասնակցության մասին, Գ. Տիրացյանը նշում է. «Ասորեստանի կործանմանը աշակցելուց հետո, Մարաստանի հետ միասին հայերը նվաճեցին Ուրարտուն, որի տեղը հանդես եկավ Հայկական թագավորությունը» («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 94)։

ցեղանվան և «Երուանդ» դինաստիական անվան հետ կապված պատմա-սշխարհագրական անունների առկայությունը Վանա լճի ավազանում[70]։ Որոշ ժամանակ Արարատյան դաշտի ուրարտական քաղաքները (որտեղ, ըստ երևույթին, թագավորում էր Ռուսա Դ-ն)[71], կարող էին մտած չլինել դրա կազմի մեջ, սակայն դա կարող էր տևել ոչ ավելի ուշ քան 590—589 թթ.։

Հայկական թագավորությունը «որդի Սկայորդույ» Պարույրի գլխավորությամբ, ըստ երևույթին, մոտ երկու տասնամյակ գոյատևում է անկախ, ապա ընկնում է Մեդիայի գերիշխանության տակ։ Պարզ է, որ դա պետք է տեղի ունեցած լիներ պատերազմի միջոցով։ Այդ իրադարձություններն արտացոլվել են Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» հետևյալ հատվածում. «Դե ասա ինձ, գու պատերազմե՞լ ես մոր կողմից իմ պապ Աստիագեսի և մեդացիների դեմ» հարցնում է Կյուրոսը (այն ժամանակ Աստիագեսի զորավարը)։ Հայոց թագավորը պատասխանում է. «Այո»։ Ապա Կյուրոսը հարցնում է. «Իսկ պարտությունից հետո դու խոստացե՞լ ես որ կվճարես հարկ, պահանջի դեպքում կտրամադրես զորք և չես ունենա ամրություններ»[72]։ Հայոց թագավորի որդիներն էին Տիգրանը և Սաբարիսը, որոնցից առաջինը Կյուրոսի որսընկերն էր։ Քսենոփոնի հաղորդմամբ Տիգրանի միջամտությունն է, որ փրկում է հորը կործանումից։ Մի այլ հատվածում հայկական թագավորը հիշատակում է նաև հորը. «Հայաստանում կա մոտ 8.000 հեծելազոր և 40.000 հետևազոր, իսկ դրամ՝ հորս թողած գանձերի հետ միասին արծաթով հաշված ավելի քան 3.000 տաղանդ»[73]։ Ինչպես նշվել է, հայոց թագավորը՝ Տիգրանի հայրը, այստեղ պիտի լինի Մովսես Խորենացու հիշատակած Երվանդ Սակավակյացը, որի հայրը, մեր կարծիքով, Պարույրն էր։

Երվանդ Սակավակյացը[74] պետք է հայկական գահ բարձրանար մինչ Մեդիայի և Լյուդիայի միջև ծագած առաջին պատերազմը (մ. թ. ա. 589—

---

70 Այս առնչությամբ Ս. Երեմյանը նշում է. «Այդ վայրերը կապված են Երուանդունիների դինաստիայի թագավորների գործունեության հետ այն ժամանակաշրջանում, երբ նրանք տակավին Այրարատի իշխողները չէին, այսինքն՝ մեդական և աքեմենյան ժամանակաշրջանում»։ («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 107)։

71 Н. В. Арутюнян, К интерпретации надписей на глиняной булле Кармир Блура («Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1, էջ 223—229)։

72 Xenophon, Cyropaedia. With an English transl. by W. Miller, in 2 vol., Mass.—London, 1953—1960, III. I. 10.

73 Նույն տեղում, III, 1. 33։

74 Երվանդի «Սակաւակեաց» մակդիրը Ս. Կրկյաշարյանն ընկալելով կարճ ապրածի իմաստով, այն առաջնահերթ փաստարկ է համարում իր այն կարծիքի, ըստ որի VI դ. սկզբին Երվանդունիների արքայատոհմի գոյությունը լուրջ հարցականի տակ է։ Նրա մյուս փաստարկներից մեկն էլ այն է, որ Արտուխաս և Արտոքմես անունների վերընթերցումը տալիս է Արտաշես անունը և դրանով իսկ Ս. Կրկյաշարյանը եզրակացնում է, որ «մ. թ. ա. VI դ. Հայաստանում եղել է մեկ այլ արքայատոհմ, որը կարելի է անվանել Արտաշեսյան» (Ս. Մ. Կ ր կ յ ա շ ա ր յ ա ն, «Երվանդունի արքայատոհմը Հայաստանում» («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 4, էջ 179—186)։ Սակայն ավելի հավանական է «Սակաւակեաց» մակդիրը մեկնել որպես քչով ապրող կամ բավարարվող՝ սակավապետ։ Այս մեկնությունը հիմնավորվում է նրանով, որ Մ. Խորենացին գովեստով խոսելով Տիգրան Երվանդունու նկարագրի մասին, հատկապես շեշտում է, որ նա կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ էր (էջ 73)։

Ինչ վերաբերում է Հայաստանում հիշատակվող Արտուխաս զորավարի (մ. թ. ա. 401) անվան նույնացմանը Արտաշեսին, ապա կա ևս մեկ հիշատակություն այլ Արտուխասի մասին, որը Կյուրոս Բ Մեծին դաշնակից վրկանացիների զորավարն էր (Xenoph, Cyrop., V. 3. 38)

585 թթ.)։ Մինչ այդ պատերազմը սկսելը Կիաքսարը պետք է արշաված լիներ Հայաստանի վրա և Երվանդին պարտադրած լիներ այն պայմանները, որոնք վերջինս չէր կատարել հետագայում, ինչպես տեղեկանում ենք «Կյուրոպեդիայի» վերը նշված հատվածից։ Հետևաբար ոչ միայն Աստիագեսի (մ. թ. ա. 585—550) հետ պետք է կապել Երվանդի ստանձնած պարտավորությունները, ինչպես դրում է Քսենոփոնը, այլև Կիաքսարի, քանի որ նա միայն իր թիկունքը ապահովելուց հետո կարող էր արշավել Լյուդիայի վրա։

Երվանդը երկար չէր կարող հանդուրժել իր կախյալ վիճակը, ուստի և պատերազմում է Աստիագեսի դեմ, սակայն պարտվում է և կրկին մնում է կախյալ վիճակում։ Սակայն որոշ ժամանակ անց դադարում է հարկ վճարել և Կյուրոսը՝ այդ ժամանակ Աստիագեսի զորավարը, արշավում է Հայաստան՝ վերականգնելու նախկին վիճակը։ Քսենոփոնի մոտ վերը նշված հատվածում, ըստ երևույթին, միահյուսվել են նաև Կիաքսարի և Կյուրոսի Հայաստանի վրայով դեպի Լյուդիա կատարած արշավանքների մասին եղած տեղեկությունները։ Հայաստանը գտնվում էր արշավող թագավորների թիկունքում, որի ապահովության համար շատ ջանք պետք է գործադրվեր։ Այս տեսակետից պատահական չէ Կյուրոսի կողմից խալդայների (խալյուբների) հաշտեցումը հայերի հետ հատկապես այն պայմանով, որ ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող լեռնագագաթները գտնվելու էին մեդացիների ձեռքում[75]։ Երկու դեպքում էլ Հայաստանից զորքերի հավաքագրումը և դրամի գանձումը նաև անմիջականորեն ծառայեցվելու էին լյուդիական պատերազմներին։

Ս. Երեմյանը ճիշտ նշում է նաև հաջորդ դարերի ընթացքում հիշատակվող Երվանդունիների ծագման աղերսը Արդինի-Մուսասիր երկրի հետ, որտեղ գտնվում էր Պլինիոսի (23—79) հիշատակած «Orontes»[76] ցեղի բնակության տերիտորիան[77]։ Ս. Երեմյանը ցույց է տվել, որ Պերգամոն քաղաքում XIX դարում հայտնաբերված հունարեն արձանագրության մեջ հիշատակվող Արմենիայի սատրապ, իսկ հետո իբրև Մյուսիայի սատրապ Օրոնտեսի (Երվանդ)[78]

---

[75] Xenoph. Cyrop. III. 2. 22.

[76] Plin. Nat. Hist. VI. XXX. 118.

[77] «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 112—113։ Տես նաև՝ Հ. Մանանդյան, Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945, էջ 28։

[78] Ռ. Դ. Ուիլքինսոնն իր հոդվածում (Orontes, Son of Artasyras. Revue des etudes Armenienne, t. VII. 1970, 448) համաձայն լինելով Ու. Հ. Ուադինդթնի տեսակետի հետ (Revue numismatique. P., 1863, էջ 235—239), նույնպես աղբյուրների և արձանագրությունների հաղորդման հիման վրա եզրակացնում է, որ եղել են երկու սատրապական ապստամբություններ՝ մ. թ. ա. 362—361 թթ. Արտաքսերքս Մնեմոնի և 5 տարի անց Արտաքսերքս Օքոսի օրոք։ Սակայն ի տարբերություն նախորդի, որը այդ ապստամբություններին մասնակից է համարում երկու Օրոնտասների (Մյուսիայի և Հայքի), Ռ. Դ. Ուիլքինսոնը միայն մեկ Օրոնտասի է ճանաչում, միևնույն ժամանակ բնական համարելով Ու. Հ. Ուադինդթնի եզրակացությունը երկուսի մասին, քանի որ վերջինիս բնականաբար հայտնի չէին անցած դարի վերջում հայտնաբերված Անտիոքոս I Կոմմագենացու և Պերգամոնում հայտնաբերված արձանագրությունները (R. D. Wilkinson, նշվ. աշխ., էջ 449, ծան. 18)։ Ռ. Դ. Ուիլքինսոնը նշում է, որ Օրոնտասը երկրորդ անգամ Մյուսիայում էր մասնակցել ապստամբությանը, ամրացրել էր Պերգամոնը և ռազմական համագործակցության մեջ էր մտել Եգիպտոսի հետ։ Ապստամբությունը հաղթանակում է և ապա մ. թ. ա. 349 թ. Օրոնտասը Աթենքում ոսկե պսակ և քաղաքացու պատիվ է ստանում։ Ապա Ռ. Դ. Ուիլքինսոնը ենթադրում է, որ Օրոնտասը կամ պարտվում է Արտաքսերքս Օքոսից, կամ էլ մեկ տասնամյակ տևած պայքարից հոգնած խաղաղվում է (նույն տեղում)։

(մ. թ. ա. V—IV դդ.) բակտրիական ծագման մասին եղած հաղորդումը ոչ թե անհեթեթություն է, ինչպես թվում էր առաջին հայացքից, այլ կապված է Հայաստանի Ջարասպ լեռան մոտ գտնվող շրջանի հետ։ Նա գտնում է, որ Ջարասպ անունը կապված է Բակտրա քաղաքի և Բակտրիանա երկրի այլ՝ Ջարիասպա անվան հետ և ապա եզրակացնում, որ «Պերգամոնի արձանագրության «Բակտրիան», անշուշտ, առաջ է եկել «Ջարասպ» անվան նույնացման հողի վրա»[79]։ Ինչպես վերը նշեցինք, իրանական ցեղերի տեղաշարժերը դեպի արևմուտք պետք է տեղի ունեցած լինեն մ. թ. ա. VII դ. առաջին քառորդում և կապված էին Առաջավոր Ասիայի որոշ երկրներում և հատկապես Մանայում սկյութական գերիշխանության հաստատման հետ։ Այս միտքը առավել ևս հաստատուն է դարձնում Ս. Երեմյանի հետևյալ նշումը. «Հետաքրքրական է, որ մեդական և հին հայկական դինաստիաները դուրս եկան այդ Մատիենից, որը համապատասխանում է Մանա երկրին և նրան հյուսիս-արևմուտքից սահմանակից Արդինի-Մուսասիրին, ինչպես և ուրարտական դարաշրջանի Պարսուա (Պարսուաշ) երկիրը»[80]։ Այս առումով պատահական չէ, հայերին «Ասքանազյան ազգ»[81] կոչելը, որը, թերևս, խոսում է հին հայկական դինաստիայի ծագման մասին։ Այն հիշատակվում է նաև Աստվածաշնչում. «Պատուէր տուք յինէն և Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին»[82]։ «Այրարատեան» և «Ասքանազեան» անունների առկայությունը, ըստ երևույթին, վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ կողք-կողքի գոյատևում էին Ուրարտուի վերջին շրջանի հայկական և Արմե-Շուպրիայի հայ-սկյութական թագավորությունները[83]։ Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հին Հայկական պետությունը անկախ գոյատևում է իր կազմավորման առաջին երկու տասնամյակներում։ Հաջորդ ժամանակաշրջանում, մինչ Դարեհ Ա-ի (մ. թ. ա. 522—485) աշխարհակալ պետության սատրապությունների վերածվելը, այն պայքարում է անկախության համար՝ Մեդական և ապա Պարսկական պետությունների դեմ։

---

79 Տեղին է հիշել Սարաբոնի աշխատությունից վերը բերած հատվածը, ուր խոսվում էր սակերի Բակտրիանայում և Հայաստանում կատարած նվաճումների մասին։

80 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 113։ Հմմտ. Վ. Վ. Ստրուվեի եզրակացությունը. «Մեդական ցեղերին համահավասար պարսկական ցեղերը պատմության հնագույն ժամանակաշրջանում բնակվել են Հայաստանին անմիջապես մերձակա վայրերում» (В. В. Струве, Арийская проблема, «Советская этнография», VI—VII, М.—Л., 1947, էջ 118—120)։

81 Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմ., ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով Մ. Աբեղյանի, Երևան, 1962, էջ 87։

82 Երեմիա, ԾԱ, 27։ Ի. Դյակոնովի կարծիքով՝ Ծ և ԾԱ գլուխներում նկարագրված անցքերը վերաբերում են մ. թ. ա. 605—590 թթ. միջև ընկած ժամանակաշրջանին։ Ինչ վերաբերում է «Ասքանազյան» անվանը, ապա նա այն դիտում է Առաջավոր Ասիայում անկախությունը կորցրած նախկին սկյութական թագավորության հիշատակություն (И. М. Дьяконов, Последние годы Урартского государства, էջ 32—33, ծան. 1, էջ 34)։

83 Ջ. Թոյնբին և Է. Մայերը Արմե-Շուպրիայի տեղում նշում են Arminiya, իսկ Հայաստանի մասած մասը Urartu և չնայած որ քարտեզները թվագրված են համապատասխանաբար 556 թ. մ. թ. ա. և 480 թ. մ. թ. ա., նրանցում արտացոլված նյութը ամենայն հավանականությամբ վերաբերում է նաև մ. թ. ա. VII դ. վերջին և VI դ. սկզբներին։ (J. Toynbee and Ed. D. Myers. Historical Atlas and Gazeteer. Qxford. 1959, քարտեզներ № 19 և 20, էջ 112—113)։

ИЗ ИСТОРИИ АРМЕНИИ VII—VI вв. до н. э.

Э. Л. ДАНИЭЛЯН

Резюме

История Армении на рубеже VII—VI вв. до н. э. тесно связана с падением Ассирийского и Урартского царств и возвышением Мидийского и Вавилонии.

В 20-х гг. VII в. до н. э. во главе союза племен Арме-Шуприи стал Паруйр — сын Скайорди (букв. сакид), который за участие в разгроме ассирийских войск под Ниневией в 612 г. до н. э. был признан мидийским царем Киаксаром (625—584) царем Армении (видимо, вначале в пределах Арме-Шуприи).

Иосиф Флавий (Ant., I, 145) возводит происхождение армян к Уросу (ассир. Урус, урарт. Руса). Из туманного сообщения Страбона об арабских племенах видно параллельное упоминание "ἀρμένιοι—ἐρεμνοί ἄριμοι" (XVI, 4, 27). Приведенные свидетельства говорят в пользу того, что имя отца Русы III-го «Эримена» можно понимать как этническое название, т. е. как имя эпонима армян — Араманеак или Арам по Мовсесу Хоренаци.

После мидийского похода, вероятно, в течение 609—605 гг. до н. э., территория бассейна озера Ван была присоединена к царству Паруйра, который был союзником Киаксара. Таким образом, к этому периоду можно отнести создание объединенного армянского царства.

Древнее армянское государство сохраняло независимость в течение первых двух десятилетий своего существования. В следующий период, вплоть до превращения в сатрапии государства Дария I-го (522—485), оно боролось за независимость против Мидийского, а затем и Персидского государств.